ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

11 հոկտեմբեր 2022թ.-ին կնքված N «ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-23/3-1» ծածկագրով՝ Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ք.Երևան «26» «01» 2023թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գ. Բոշյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լոկատոր» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով «ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-23/3-1» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հաշվի առնելով, որ 2023 թվականի համար հատկացվել են համապատասխան ֆինանսական միջոցներ, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել Պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույցի՝ հավելված N 1-ի և Վճարման ժամանակացույցի՝ հավելված N 2-ի:

1.2 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում 2023թ-ի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև Համաձայնագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	«Լոկատոր»ՓԲԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի 36ա-22
Կառավարական տուն 1	«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 2474703386220000
Հ/Հ 900011024057	ՀՎՀՀ 00095651
ՀՎՀՀ 02505554	
/ ստորագրություն / Գ.Բ	/ ստորագրություն / Ա.Խ

Հավել
«11 » հոկտեմբեր 2022թ. կն
«ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-23/3-1» ծածկագրով պայմանագ
« 26 » « 01 » 2023թ. կնքված N 1 Համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը***	չափման միավորը	ընդհանուր առավելագույն գինը** / ՀՀ դրամ /	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը*
1	63711260/502	Երթևեկության դիտանցման (մոնիթորինգի) ծառայություններ Ստորև նշված ծառայությունների համակարգը պետք է համապատասխանի հետևյալ չափորոշիչներին. -լինի WEB հենքով, կլիենտ-սերվերային սկզբունքով -ունենա առնվազն տվյալների պահպանման 1 տարվա հնարավորություն: -Սերվերը տեղակայված լինի ՀՀ տարածքում, որում ներառված լինի ծրագրային համակարգը, որն էլ հնարավորություն կտա պահպանել տվյալների բազաները՝ վնասման դեպքում պահպանելով միջազգային ինտերնետային կապուղիների լոկալ ցանցով աշխատելը -համակարգը պետք է ունենա հայերեն և ռուսերեն և/կամ անգլերեն լեզուների հնարավորություն -տրանսպորտային միջոցների	դրամ	390000	1	Ք. Երևան, Արմենակյան 129	կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսված մինչև 2023թ. Դեկտեմբերի 25-ը

		աշխարհագրական դիրքը էլեկտրոնային քարտեզի վրա որոշելու և ցուցադրելու հնարավորություն -տրանսպորտային միջոցի անցած ճանապարհը, շարժման ուղղությունը, արագությունը -ՀՀ տարածքում հասցեների փնտրման համակարգ -շարժական օբյեկտների խմբավորման և առանձին դիտման հնարավորություն -օպտիմալ ճանապարհի և դրա երկարության որոշում և ցուցադրում) -Մեքենայի փաստացի հետագծի և նախապես սահման հետագծերի համեմատում առցանց ռեժիմում -հաշվետվություն ըստ կանգառների ժամանակի, համակարգը պետք ցույց տա սահմանված ժամանակահատվածում, սահմանված տևողությամբ կանգառները -կամայական կետեր ստեղծելու և մեքենաների հետագծերը դրանց հետ համեմատելու հնարավորություն (ըստ սահմանված նորմատիվների՝ շառավիղ, կանգառի ժամանակ) -նախապես որոշված ժամանակահատվածում մեքենայից ստացվող տեղեկատվության բացակայության և դրա պատճառի որոշման հնարավորություն -քարտեզի վրա ստեղծված կամայական բազմանկյան և մեքենաների հետագծերի համեմատման հնարավորություն՝ ըստ կմ-ի, ժամի, մուտք-ելքերի քանակի և					

		ժամերի ֆիքսման հնարավորության -սնուցման լարման միջոցով շարժիչի աշխատաժամանակի հստակ որոշման հնարավորություն -հիշեցումների համակարգ (կմ, աշխատաժամ, օր չափորոշիչներով) -վառելիքի ծախսի որոշման հնարավորություն (լ/ժ, կմ/ժ. չափորոշիչներով), ինչպես նաև գործակցի կիրառման հնարավորություն -IP (ինտերնետային արձանագրություն) մուտքերի սահմանափակման հնարավորություն -հաշվետվությունների հնարավորություն նաև MS Excel ֆորմատովի ձևաչափով -մեքենայի հետագծի ելքագրման և այլ համատեղելի GIS(աշխարհագրական տեղեկատվական) համակարգերում դիտելու հնարավորություն -համակարգում իրավասությունների դիսկրետ բաժանման հնարավորություն յուրաքանչյուր օգտագործողի համար, այդ թվում՝ ցանկացած մեքենայի կամ որոշակի խմբերի վերահսկում -ընտրված հաշվետվությունները օգտվողի էլ. փոստին ուղարկելու հնարավորություն -բոլոր տեսակի իրավասությունների փոփոխությունների պատմության պահեստավորում					

		-համակարգի միջոցով օգտատերերին հաղորդագրություն ուղարկելու հնարավորություն -նախապես սահմանված արագության չափը գերազանցելու դեպքում ավտոմատ ազդարարման հնարավորություն -երկու և ավելի կետերի միջև ուղիղ գծով հեռավորությունը չափելու գործիք -կանգառից կանգառ հետագծի երկարության, շարժման միջին արագության, ժամանակի, շարժիչի աշխատաժամի, վառելիքի ծախսի որոշում -հաշվետվություն՝ ըստ կանգառների տևողության. պետք է հնարավոր լինի յուրաքանչյուր մեքենայի համար ավտոմատ կերպով ստանալ հաշվետվություն, որում կհամեմատվեն մեքենայի կատարած կանգառները և սահմանված ժամանակային միջակայքը, իսկ շեղումները կցուցադրվեն առանձին ցանկով -գրաֆիկի տեսքով պատկերված հաշվետվություն, հետևյալ պարամետրերով ա) սնուցման լարում գ) արագություն դ) տեսանելի արբանիակների քանակ հետագծի դիտում էմուլյացիայով ծրագրային հավելվածներ Android և IOS համակարգների համար Ծրագրային համակարգը և քարտեզը պետք է մշակված լինեն մասնակցի					

		կողմից: Պատվիրատուն ունենա համակարգում փոփոխություններ կատարելու հնարավորություն, նաև հաշվետվությունների փոփոխում: Տրանսպորտային միջոցների քանակը՝ 18:					

* *ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024057
ՀՎՀՀ 02505554

/ ստորագրություն / Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Լոկատոր»ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի 36ա-22
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2474703386220000
ՀՎՀՀ 00095651

/ ստորագրություն / Կ.Տ

Հավելված
«11 » հոկտեմբեր 2022թ. կնքված
«ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-23/3-1» ծածկագրով պայմանագրի
«26 » « 01 » 2023թ. կնքված N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

դրամերով նախատեսված ,ափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի Դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	63711260/502	Երթևեկության դիտարկման (մոնիթորինգի) ծառայություններ	0	32500	65000	97500	130000	162500	195000	227500	260000	292500	325000	390000	390000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024057
ՀՎՀՀ 02505554

/ ստորագրություն / Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Լոկատոր»ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի 36ա-22
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2474703386220000
ՀՎՀՀ 00095651

/ ստորագրություն / Կ.Տ